Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՀ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(Երեւան, 20 սեպտեմբերի, 2018 թ.)

Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության,
Մեծարգո Վարչապետ,
Մեծարգո Նախագահ Արցախի Հանրապետության,
Մեծարգո Աժ Նախագահ,
Հարգարժան պատգամավորներ, պետական այրեր,
Սիրելի ներկաներ,

Ուրախ ենք այսօր միասնաբար մասնակցելու ՀՀ Խորհրդարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված միջոցառմանը եւ բերելու ձեզ եւ Մեր ողջ բարեպաշտ ժողովրդին Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները։

Մեկ դար առաջ՝ մեր պատմության վճռորոշ ժամանակաշրջանում ազգիս զավակների տեսիլքով, վճռակամությամբ եւ հերոսական պայքարով վերականգնվեց հայկական անկախ պետականությունը։

Երջանկահիշատակ Գեւորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսի կոչով Արարատյան դաշտավայրի եկեղեցիներում ղողանջող զանգերի զորությունն էր, որ ոգեշնչեց ու գոտեպնդեց մեր ժողովրդին հաղթանակով պսակելու հայրենիքի պաշտպանության մարտերը եւ ամուր կանգնելու մեր հողի վրա։ Արդարեւ, անցյալ դարասկիզբը եղավ փորձության, բայց եւ հերոսության ու անօրինակ խիզախ իրագործումների ժամանակաշրջան, երբ մեր ժողովուրդը, քաղաքական այրերը եւ Հայ Եկեղեցին լծվեցին անկախ պետականության կերտման նվիրական գործին։ Հիմնվեց առաջին Խորհրդարանը, քայլեր ձեռնարկվեցին պետությունը զորացնելու, քաղաքացիական հասարակություն ձեւավորելու ուղղությամբ, ջանքեր գործադրվեցին ապահովելու խաղաղ ու անվտանգ կյանքը մեր ժողովրդի։ Հայաստանի Առաջին Հանրապետության երախտավորների ազգային մտածողությունը, մեր դարավոր արժեքներին հավատարմությունը, հայրենանվիրումը եւ պետության զորացման համար ջանքերը մեկտեղելու բացառիկ նախանձախնդրությունը օրինակ են եւ այսօր ազգային, քաղաքական ու հասարակական մեր գործիչների համար։

«Հայաստանի Հանրապետության օրենսդիր բարձրագույն մարմնի՝ Ազգային ժողովի առաքելությունը բարիք արարելն է մեր պետության հզորացման, հայրենական կյանքի շենացման համար»: (Գարեգին Բ. Կաթողիկոս Ամենայն Հայոց)

Սիրելիներ, «Օրենքի իմացությունը մտքի բարիք է»,– ասում է Սուրբ Գիրքը (Առակ. 13.5)՝ կարեւորելով օրենքի դերը հասարակությունների կյանքում։

Հայաստանի Հանրապետության օրենսդիր բարձրագույն մարմնի՝ Ազգային ժողովի առաքելությունը բարիք արարելն է մեր պետության հզորացման, հայրենական կյանքի շենացման համար։ Մեր ժողովրդի ակնկալիքն է, որ խորհրդարանը լինի արտահայտողը ժողովրդի սպասումների, մտահոգությունների եւ տեսիլքների, լինի մանրակերտը մեր հասարակության։ Ազգային Ժողովին ներկայիս նույնպես բաժին է ընկել մեծ պատասխանատվություն՝ օրենսդրական արդյունավոր գործունեությամբ նպաստել պետական-հասարակական կյանքի առաջընթացին։ Օրենքի առջեւ բոլորի հավասարության, արդարության, հասարակական համերաշխության ժողովրդավարական սկզբունքներն իրագործելով, միմյանց հանդեպ քրիստոնեական սիրո ոգով ու ավետարանական պատգամներով է, որ կարողանալու ենք բարի արդյունքներ բերել մեր հայրենիքին ու ժողովրդին։

Մեծարգո պատգամավորներ, ձեր քաղաքական դիրքորոշումների ու հայացքների տարբերություններով հանդերձ՝ կոչված եք գործելու հանուն նույն նպատակի՝ հայրենիքի զորացման, պետականության ամրապնդման, մեր ինքնության անխաթար պահպանության եւ մեր ժողովրդի բարօրության ու առաջընթացի համար։ Մեր ազգային միասնությունը ապահովելը եւ մեր ժողովրդի եռանդն ու կարողությունները դեպի հայրենիքի շենացում ու զարգացում առաջնորդելը այսօր բոլորիս ամենօրյա աշխատանքը պետք է լինի, բոլորիս բարձր պատասխանատվությունը։ Այսպես պիտի կարողանանք հաղթահարել մեր երկրի առջեւ ծառացած մարտահրավերներն ու խնդիրները, պաշտպանել մեր հայրենյաց սահմանները, մեր կյանքի խաղաղությունն ու անվտանգությունը։

Հայրապետական Մեր հորդորն է ձեզ, որ առ հայրենիքը սիրով եւ ազգանվիրումի ոգով շարունակեք արդյունավորել ձեր ծառայությունը մեր պետությանը եւ ժողովրդին՝ բարի գործակցությամբ ձեռքբերումներ արձանագրելով։

Աղոթում ենք, որ Ամենակարող Աստված խաղաղության մեջ պահի մեր հայրենիքը եւ Իր Սուրբ Աջի հովանու ներքո հավատքի, սիրո, միաբանության մեջ պահպանի մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփյուռս՝ այսօր եւ հավիտյանս. ամեն։